Հավելված
ՀՀ կառավարության 2013 թվականի
հունիս 13 -ի N 621 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊԱՀՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ-ՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՎՃԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական ռեգիստրի գործակալությունում (այսուհետ՝ գործակալություն) պահվող տեղեկությունների տրամադրման համար պետական տուրքի վճարումից ազատելու կարգը:

2. Գործակալությունում պահվող տեղեկությունների տրամադրման համար պետական տուրքի վճարումից, սույն կարգով ազատվում են Հայաստանի Հանրապետության օրենսդիր, գործադիր իշխանության, տեղական ինքնակառավարման մարմինները, մարդու իրավունք-ների պաշտպանը, Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային և զբաղվածության հիմնադրամը (այսուհետ՝ դիմող մարմին):

3. Դիմող մարմինը տեղեկություններն էլեկտրոնային եղանակով պարբերաբար ստանալու համար գրավոր դիմում է ներկայացնում գործակալություն:

4. Դիմումն ստանալուց հետո 10-օրյա ժամկետում դիմող մարմնին գործակալության տեղեկատվական համակարգին միանալու համար տրամադրվում է համապատասխան մուտքի անուն, գաղտնաբառ, իսկ անհրաժեշտության դեպքում նաև անվտանգության սարք:

5. Դիմող մարմինը պարտավորվում է տեղեկատվական համակարգից օգտվել բարեխղճորեն, ստացված տեղեկատվությունն օգտագործել իր պաշտոնական լիազորու-

թյունների իրականացման շրջանակում, չշրջանցել համակարգից օգտվելու ծրագրային սահմանափակումները:

6. Դատական իշխանության մարմինները գործակալությունում պահվող տեղեկությունների տրամադրման համար պետական տուրքի վճարումից ազատվում են դատարանների էլեկտրոնային կառավարման համակարգի և e-register համակարգի միացման միջոցով տեղեկությունների ստացման դեպքում, ինչպես նաև դատավարական օրենսդրությամբ սահմանված կարգով՝ դատարանի համապատասխան որոշման հիման վրա տեղեկությունները պահանջելու դեպքում:

7. Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 9-ի N 1125-Ն որոշմամբ հաստատված մասնավոր անձանց խմբերն ազատվում են գործակալությունում պահվող տեղեկությունների տրամադրման համար պետական տուրքի վճարումից՝ պետական միասնական գրանցամատյանի տեղեկությունները Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի հրամանով սահմանված կարգով ինքնաշխատ եղանակով ստանալու դեպքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ